# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N304-Ա**
**«09» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ.**

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարություն 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման 1-ին կետով, ««Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1715-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1715-Ն որոշումներով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին հատկացված գումարից՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն բռնի տեղահանված քաղաքացիների հաշվառման ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի կետում տեղակայված բնակչությանը սննդով ապահովման նպատակով Արենիի համայնքապետարանի կողմից ձեռք բերված և բնակչությանը տրամադրված սննդի համար Արենիի համայնքապետարանին հատկացնել 907 600 (ինը հարյուր յոթ հազար վեցը հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն ներկայացված փաստաթղթերի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**